Արեւուն բծերը։ — Խսել մը օր կայ որ արևուն երեսը բազմաթիւ բծեր կը տեսնուին, որոնք զուգահեռական գիրքով մը արեգակնային հասարակածին երկու կողմը տարածուած են. ընդ ամէնը տասը կամ տասուերկու խումբ է, և իւրաքանչիւր խումբը մօտ վաթսուն բծէ բաղկացած է, և ամէն մէկ խումբը մէկ թերաստուեր մը միայն ունի իր բոլորը։ Այս բծերէն ոմանք այլ և այլ մանր մանր բծերէ ձևացած են, և մէկ թերաստուեր մը միայն ունին։

Պ. Շագօռնաք որ տասուերկու տարիէ 'ի վեր մեծագոյն խնամօք արևուն բծերուն երևոյթն ու տարածութիւնները դիտելու եռեւէ է, դեռ ինչուան հիմա ասանկ բազմաթիւ բծեր տեսած չէր։

Հիմակուան բծերն անանկ երագ փոփոխութիւններ կը կրեն, որ քանի մը ժամուան մէջ բոլորովին երևոյթնին կը փոխեն։ Ինչպէս յունիսի 26ին, արևուն շառաւիղին հինգերորդ մասին հաւասար անկիւնաւոր տարածութիւն ունեցող բծերու խումբ մը յանկարծ տեսնուեցաւ. և նոյն օրէն ետև անընդհատ վրան մեծամեծ փոփոխութիւններ սկսան տեսնուիլ, և յունիսի 29ին անանկ անկիւնաւոր տարածութիւն մը առաւ, որ արևուն շառաւիղին քառորդը կ'անցնէր։

Միշտ այնպէս կարծուած էր որ արևուն բծերը երկրիս բարեխառնութեանը վրայ օգտակար ազդեցութիւն մը ունենան։ Որչափ որ ազդեցութիւն մը ունենալնին հաւաստի կը տեսնուի, բայց օգտակար ըլլալը այնպէս մը չհաստատուիր տեսնելով յունիսի մէջ եղած օդոց խառնակութիւնը։ Բայց աս ալ պէտք է ըսենք որ, արևը բոլոր աշխարհքիս համար ըլլալով, պէտք է իր ազդեցութիւնն ալ ըստ ընդհանուրին դիտել, և ոչ թէ առանձին տեղւոյ մը բարեխառնութեանը նայիլ։

Մանր գիտելիք։

Վիճակագրութիւն նաւաբեկութեան։ — Անցեալ տարուան նաւուց վիճակագրութեան նայելով կը տեսնենք որ 2,320 նաւ կորսուեր են. Այս նաւերէս 472 գաղղիացի են, յորոց 109 միայն երկայն նաւագնացութիւն ընող նաւեր են և 363 կարճ նաւագնացութիւն կամ ափնածիր ըսուած նաւեր։ Պատերազմական նաւերէն կորսուեցաւ Տիւշէլէն եռայարկը, Սանէ կրկնայարկն ու Սիբէյիէնի թնդանօթակիրը։ Իսկ Անգղիացիք կորսնցուցին 1,301 նաւ՝ որ օրը երեքէն աւելի կ'իյնայ։ Այս վերի գրած ամբողջական գումարէն 165 նաւին վրայ ամենևին լուր մը չէ առնուած, որով ըսել է եթէ ինչք և եթէ անձինք բոլորովին կորսուեր են. ասոնցմէ 77 անգղիացիք են և 24 գաղղիացիք։ Դարձեալ 113 նաւ ալ այրելով փճացան. 39 ամերիկացի, 21 անգղիացի, 9 գաղղիացի, 44 այլ և այլ դրօշակաւ։ Նոյնպէս 126 շոգենաւ ալ այլ և այլ վտանգներու պատահելով կորսուած են։ 58 անգղիացի, 23 ամերիկացի, 11 գաղղիացի, ու 12 գաղղիացի շոգենաւ ալ ուրիշ նաւու զարնուելով ընկղմած է։ Դարձեալ 47 շոգենաւ ալ յայլ և այլ ազգաց աննաւարկելի եղած են չարաչար վնասուելնուն համար։

1858ին նաւաբեկելոց թիւն 2,083 միայն եղած էր, որով ըսել է թէ անցեալ տարի 237 նաւ աւելի կորսուեր է։

Որչափ որ այս կորսուածներուն թիւը ըստ բաւականին մեծ է, բայց մէկալ կողմանէ աս ալ պէտք է գիտնալ որ վաճառականութեան զարգացմամբը նաւերուն թիւն ալ տարուէ տարի աճելու վրայ է։

Երուսաղէմայ բնակչութիւնը այլ և այլ դարուց մէջ։ — Պալպի երևելի աշխարհագիրին հաշուին համեմատ Եբրայեցիք

Եգիպտոսէն ելլելու ժամանակ . . .	2,500,000
Մովաբայ դաշտերուն մէջ, Եգիպտոսէն ելլելնէն 40 տարի վերջը . .	2,500,000
Դաւթի թագաւորութեան վերջերը .	7,000,000
Սողոմոնի թագաւորութեան վերջերը .	8,000,000
Քրիստոսի ծննդեան ժամանակ ու մեծին Հերովդի թագաւորութեան վերջերը	5,600,000
1833ին	4,000,000

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ